ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 74-Լ

«12» 09 2023 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Վիգեն Հայկի Միլիտոնյանին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնին փոխադրելու և Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի պարտականությունների կատարումը նույն վարչական շրջանների դատախազի տեղակալ Արթուր Ռաֆիկի Սարգսյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 394-Ա հրամանը և այն, որ անհրաժեշտ է կատարել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Վ.Միլիտոնյանի կողմից՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա.Սարգսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Ավագյան Եղիազար - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Ռուստամյան Վազգեն -	Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Մանուկյան Լիաննա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետ,
Մինասյան Մարինե -	Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 25-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ